

Էդիտա Գ. Գզոյան
Պատմ. գիյր. թեկնածու

ՄԱՌԱԳԱՍԿԱՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ- ՍՏԵՂԾԵԼՈՒ 1925–1926 ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ

Եվ հրեական հարցի լուծման 1940–ական թթ.
«Մաղազասկարյան նախագիծը». համեմատական
քննություն*

Բանալի բառեր – Ազգերի լիգա, հայ գաղթականու-
թյուն, վերաբնակեցում, Երևանյան ծրագիր, Հայոց ցեղաս-
պանություն, Մաղազասկար, ֆրանսիական գաղութ, Մաղա-
զասկարյան նախագիծ, հրեաների վերաբնակեցում:

Մուտք

Ազգերի լիգան կարևոր դերակատարություն ունեցավ հայ գաղթական-
ներին վերաբնակեցնելու և հայկական Սփյուռքի ձևավորման գործում: 1925–
1926 թթ. նրա նախաձեռնություններից մեկը հայ գաղթականներին Մաղա-
զասկարում բնակեցնելու ծրագիրն էր, որը նախատեսված էր որպես այլ-
ընտրանք՝ Խորհրդային Հայաստանում հայերի բնակեցման այսպես կոչված՝
Երևանյան ծրագրին: Սակայն Մաղազասկարում հայերի բնակեցման ծրա-
գիրը չիրականացվեց, քանի որ այն հետաքրքրություն չառաջացրեց հայ
գաղթականների և շահագրգիռ այլ շրջանակների մոտ:

Հետաքրքրական է, որ եթե 1925–1926 թվականներին Ազգերի լիգան հա-
յերի վերաբնակեցումը Մաղազասկարում դիտում էր որպես փրկություն
գաղթականական աղետից, ապա քիչ անց՝ 1940–ական թվականներին Եր-
րորդ Ռայխի կողմից Մաղազասկարը դիտվելու էր որպես հրեական հարցի
«վերջնական լուծման» տարբերակ:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2019:

1. Հայոց ցեղասպանությունն ու գաղթականության խնդիրը

1915–1923 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքներից մեկը անմխիթաբար վիճակում գտնվող գաղթականների մեծ թիվն էր, որոնք սփռված էին տարբեր վայրերում՝ Կովկասում, Ռուսաստանում, Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում և այլուր: Ցեղասպանության հետևանքով հազարավոր հայեր տեղափոխվեցին Սիրիա, որտեղ կենտրոնացան գաղթականական ձանձարներում՝ սիրական մեծ քաղաքներում¹: Հայ գաղթականների երկրորդ մեծ հոսքը տեղի ունեցավ 1921 թ.² Թուրքիայի և Ֆրանսիայի միջև Անգորայի պայմանագրի կնքումից հետո, երբ ֆրանսիական զորքերը լքեցին Կիլիկիան, որտեղ Հայոց ցեղասպանությունից հետո ապաստանել էին տասնյակ հազարավոր հայեր՝ ազգային օջախ ստեղծելու ակնկալիքով³: Միջերկրական ծովով մի շարք երկրներում՝ Կիպրոս, Պաղեստին, Եգիպտոս ապաստանելու անհաջող փորձերից հետո՝ բազմաթիվ հայեր կրկին հայտնվեցին Սիրիայում, ոմանք էլ՝ Հունաստանում:

Գաղթականների հերթական մեծ ալիքը բարձրացավ հույն-թուրքական պատերազմում Հունաստանի պարտությունից հետո, երբ հայ գաղթականները շարժվեցին հիմնականում դեպի Հունաստան և Բուլղարիա⁴, ոմանք էլ՝ կրկին դեպի Սիրիա⁵: Թուրքերը հետ գրավեցին Առաջին համաշխարհային պատերազմում իրենց կորցրած տարածքները՝ Զնուռնիայում կոտորելով հիմնականում հայ և հույն հազարավոր քրիստոնյաների⁶:

Ազգայնական պայքարի արդյունքում 1923 թ. ստեղծվեց Թուրքիայի Հանրապետությունը, որը փորձեց չեղարկել Սևրի պայմանագիրը՝ այն փոխարինելով Լոզանի պայմանագրով: Դա կրկին հանգեցրեց բռնությունների և գաղթականության նոր ալիքի: Հայ և հույն հազարավոր գաղթականներ սկսեցին լքել թուրքական տարածքները, ինչը հանգեցրեց Կոստանդնուպոլսի մերձակայքում գաղթականների կուտակումների՝ մոտ 130 հազար Զնուռնիայից և 70 հազար Բրուսայի շրջանից⁷: 1923 թ. Ազգերի լիգայի հովանու ներքո Թուրքիայի և Հունաստանի միջև տեղի ունեցավ բնակչության պարտադրված փոխանակում⁸, ինչի արդյունքում 1.4 միլիոն հույների հետ Թուրքիայի տարածքը լքեց մոտ 300 հազար հայ⁸: Եթե հույն գաղթականները հիմնականում ապաստան գտան իրենց հայրենիքում, ապա հայ գաղ-

1 Տե՛ս **Raymond Ke'vorkian**, *Aux origines des communautes arme'niennes du Proche-Orient: les rescape's du ge'nocide*, in "Les Arme'niens 1917-1939. La quete d'un refuge", eds. **Raymond Ke'vorkian, Le'von Nordiguian, Vahe' Tachjian**, PUSI, 2006, էջ 19-39:

2 Տե՛ս *Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий*, Ред. и сост. профессор **Ю. Г. Барсегов**, том 1, «Гардарики», Москва, 2002, էջ 674, տե՛ս նաև **Vahe' Tachjian**, *Du repatriement en Cilicie au nouvel exode vers la Syrie et le Liban*, in "Les Arme'niens 1917-1939. La quete d'un refuge", eds. **Raymond Ke'vorkian, Le'von Nordiguian, Vahe' Tachjian**, PUSI 2006, էջ 39-57:

3 Տե՛ս **Carlile Macartney**, *Refugees, the work of the League*, "Pelican Press", London, 1931, էջ 52:

4 Տե՛ս *Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества*, էջ 675:

5 Մանրամասն տե՛ս **Tehmine Martoyan**, *The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy*, in "Genocide in the Ottoman Empire. Armenians, Assyrians and Greeks, 1913-1923", ed. George N. Shirinian, Berghahn, New York-Oxford, 2016, էջ 227-253.

6 Մանրամասն տե՛ս **Harry J. Psomiades**, *Fridtjof Nansen and the Greek Refugee Crisis 1922-1924*, New York 2011, էջ 37:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 53-83:

8 Մանրամասն տե՛ս **Գևորգ Վարդանյան**, *Հույն բնակչությունն Օսմանյան Կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923թթ.)*, Երև., «Կոլաժ», 2012 թ., էջ 146-157, Տե՛ս նաև՝ *The League of Nations Archives and Historical Collection Section (hereinafter LNA), League of Nations, The record of the Assembly Plenary Meetings*, Geneva, 1930.

թականների ճակատագիրը բավական մշուշոտ էր: Հայաստանի Հանրապետությունը դադարել էր գոյություն ունենալ, իսկ Թուրքիա վերադառնալու տարբերակն անվտանգ չէր: Բացի այդ, Թուրքիայի Հանրապետությունը քայլեր էր ձեռնարկել հայ գաղթականների վերադարձը կանխելու ուղղությամբ: Մասնավորապես, Զմյուռնիայի աղետից հետո Թուրքիան լքած հայերին տրամադրվել էին միայն երկիրը լքելու անձնագրեր՝ առանց հետդարձի հնարավորության⁹: Անկարայի կառավարության 1923 թ. սեպտեմբերի 8-ի որոշման համաձայն այն հայերը, ովքեր գաղթել էին Կիլիկիայից կամ Թուրքիայի արևելյան նահանգներից չպետք է Թուրքիա մուտք գործելու թույլտվություն ստանային¹⁰: Արդեն 1927 թ. մայիսի 22-ի օրենքով նախկին օսմանահպատակները, ովքեր 1923 թ. հուլիսի 24-ից մինչև այդ օրենքի ընդունումը գտնվել էին թուրքական տարածքից դուրս և չէին վերադարձել ու մասնակցել Թուրքիայի անկախության համար մղվող պայքարին, համարվում էին թուրքական քաղաքացիությունը կորցրած¹¹: Միաժամանակ հայերի գույքը դիտվում էր որպես լքյալ և բաժանվում թուրք գաղթականներին, օգտագործվում պետության կարիքների համար¹²:

Ինչպես նշում է ֆրանսահայ պատմաբան Ծովինար Գևորյանը՝ «Հույն գաղթականները գալիս էին մի երկրից, որտեղ նրանք փոքրամասնություն էին, սակայն հաստատվեցին մի երկրում, որտեղ նրանք քաղաքացիներ էին, ինչը հայ գաղթականների դեպքում այդպես չէր: Նրանց կարգավիճակն ու բնակեցումը դժվար խնդիրներ էին»¹³:

Արդյունքում, հայ գաղթականների բնակեցման հարցը մնաց առկախ: Թեև հայ և միջազգային մարդասիրական կազմակերպություններն ու առանձին անհատներ, ովքեր ապաստան էին տվել հայ գաղթականներին, օգնություն էին տրամադրում, սակայն ակնհայտ էր նրանց համար մշտական բնակության ծրագիր մշակելու անհրաժեշտությունը:

2. Ազգերի լիզան և գաղթականների խնդիրը

Առաջին համաշխարհային պատերազմից հետո միջազգային հարաբերությունների թատերաբեմում հայտնված Ազգերի լիզան իր առաքելությունն էր համարում համաշխարհային խաղաղության պահպանումը՝ ապագա հնարավոր պատերազմները և դրանց կործանարար հետևանքները կանխելու, բնակչությունների և արբիտրաժի միջոցով միջազգային վեճերը լուծելու միջոցով¹⁴: Բացի խաղաղապահի այս դերից Ազգերի լիզան իր վրա էր վերցրել նաև մի շարք սոցիալական խնդիրներ, որոնք արտացոլված էին կազմակերպության Կանոնադրության 23-25-րդ հոդվածներում և վերաբե-

9 Միայն առանձին դեպքերում Թուրքիայի կառավարությունը հնարավորություն էր տալիս վերադառնալու:

10 Տե՛ս **Барцегов Ю. Г.**, Геноцид армян: Преступление по международному праву, XXI век, Москва, «Согласие», էջ 200: Տե՛ս նաև **Շավարշ Թորիկեան**, Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պէրյուր, 1976, էջ 161:

11 Տե՛ս **Барцегов Ю. Г.**, Геноцид армян: Преступление по международному праву, XXI век, Москва, «Согласие», էջ 200: Տե՛ս նաև **Bedros Der Matossian**, The Taboo within the Taboo: the Fate of the "Armenian Capital" at the End of Ottoman Empire, "European Journal of Turkish Studies", 2011, էջ 1-23.

12 Տե՛ս **Հովհաննիսյան Անուշ Ի.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Վէմ», 2011, N 1, էջ 176-180:

13 **Dzovinar Kevonian**, Réfugiés et diplomatie humanitaire, Les acteurs européens et la société proche-orientale pendant l'entre deux-guerres, Sorbonne 2004, էջ 311

14 Տե՛ս **Covenant of the League of Nations**, Yale Law School, դիտվել է՝ 12 նոյեմբեր 2017, http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp.

րում էին աշխատանքի արդար և մարդկային պայմանների ապահովմանը, բնիկ ժողովուրդների հանդեպ արդար վերաբերմունքին, երեխաների և կանանց տրաֆիկինգին, թմրամիջոցների և այլ վտանգավոր դեղերի շրջանառությանը, զենքի և զինամթերքի առևտրին, հիվանդությունների կանխարգելմանը և վերահսկմանը, ինչպես նաև Կարմիր Խաչի կազմակերպությունների խթանմանը, որոնց նպատակը առողջության բարելավումն էր, հիվանդությունների կանխարգելումը և տառապանքի մեղմումը ամբողջ աշխարհում և այլն¹⁵:

Չնայած Առաջին համաշխարհային պատերազմից հետո գաղթականների աննախադեպ թվին՝ մոտ 2 միլիոն մարդ, և դրա հետ կապված դժվարություններին՝ Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ որևէ կոնկրետ հոդված գաղթականների խնդրի վերաբերյալ չկար: Շատ շուտով, սակայն, կազմակերպությունը ստիպված էր առերեսվել այս խնդրին: Գաղթականների հարցում Ազգերի լիգայի ներգրավվածությունը սկսվեց բարեգործական կազմակերպությունների և այն կառավարությունների խնդրանքով, որոնք մեծապես տուժել էին գաղթականության խնդիրներից: Քանի որ գաղթականների վերաբերյալ որևէ կետ կազմակերպության Կանոնադրության մեջ չկար, հարցի ինստիտուցիոնալ զարգացումը տեղի ունեցավ միջազգային իրավական համաձայնագրերի միջոցով, որոնք կնքվեցին Ազգերի լիգայի շրջանակում¹⁶: «Այն ինչ առանձնացնում էր գաղթականական խնդիրը, որին Ազգերի լիգան առերեսվեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո, մասամբ պայմանավորված էր խնդրի մեծությամբ, ինչը ժամանակակից աշխարհում բացառիկ էր, մասամբ էլ այն հանգամանքով, որ առաջին անգամ փորձ էր արվում խնդրին անդրադառնալ համակարգված և միջազգայնորեն»¹⁷:

Գաղթականներին օգնելու Ազգերի լիգայի մարդասիրական ձեռնարկը ձևավորվեց ռուս, հայ, հույն և բուլղար գաղթականների խնդիրների լուծման համատեքստում: Սակայն, ակնհայտ էր, որ այս գաղթականների խնդիրները չէին վերաբերում լոկ նշված ազգություններին և չէին կարող լուծում ստանալ միայն վերջիններիս կողմից: Մեծ տերություններից շատերը այս կամ այն պատճառով նույնպես ներգրավվեցին հարցի լուծման մեջ: Ազգերի լիգան՝ որպես վերազգային մարմին, չէր կարող անմասն մնալ գաղթականության խնդրից և ի վերջո ներգրավվեց հարյուր հազարավոր գաղթականների աջակցության և տեղավորման գործին:

Չնայած հայ գաղթականների խնդիրը պատմական թատերաբեմում հայտնվել էր ավելի շուտ, Ազգերի լիգայի ծրագրերում այն ընդգրկվեց բավականին ուշ: Կազմակերպության ներգրավումը գաղթականության խնդրին տեղի ունեցավ 1920 թ. գարնանը և կապված էր Կենտրոնական Եվրոպայի ու Միջին շուրջ 400.000 ռազմագերիների հայրենադարձության հետ, ինչը բարեհաջող իրականացվեց Ազգերի լիգայի բարձր կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի ղեկավարությամբ¹⁸: Այս ուղղությամբ հաջորդ քայլը կապված էր ռուս

15 Տե՛ս նույն տեղում, հոդվածներ 23-25:

16 Տե՛ս **Gilbert Jaeger**, On the history of the International Protection of Refugees, "International Review of the Red Cross" 83, N 843, 2011, էջ 729:

17 Տե՛ս **Carlile Macartney**, նշվ. աշխ., էջ 5:

18 Տե՛ս **Martyn Housden**, When the Baltic Sea was a "Bridge" for Humanitarian Action: the League of Nations, the

գաղթականների՝ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից և Քաղաքացիական պատերազմից հետո առաջացած ձգնաժամի հետ:

1921 թ. փետրվարին Միջազգային Կարմիր խաչի կոմիտեի նախագահը պաշտոնապես դիմում է Ազգերի լիգային որպես վերազգային միակ կազմակերպության՝ նշանակելու հանձնակատար ռուս գաղթականների գործը վերահսկելու համար, քանի որ միայն մարդասիրական կազմակերպություններն ի վիճակի չէին իրականացնելու այդ աշխատանքը¹⁹: Ռուս գաղթականների հարցով հանձնակատարի հիմնական խնդիրը լինելու էր գաղթականների հայրենադարձության, նրանց իրավական կարգավիճակի սահմանման հարցերը և բարեգործական կազմակերպությունների ջանքերի համակարգումը:

Ազգերի լիգայի՝ միջազգային համագործակցության զարգացման և միջազգային խաղաղության ու անվտանգության հասնելու առաքելությունները, ինչպես նաև Կանտոնադրության 23-րդ և 25-րդ հոդվածները հանդիսացան այն հիմքը, որը թույլ տվեց Կազմակերպությանը ներգրավվելու գաղթականության խնդրին: Միաժամանակ, Ազգերի լիգան գաղթականության գործը ստանձնեց երկու հիմնական վերապահումներով. նախ, կազմակերպությունը որևէ ֆինանսական կամ կազմակերպչական պատասխանատվություն չէր կրելու օժանդակության համար և, երկրորդ, կազմակերպության ներգրավումը գործին ժամանակավոր բնույթ էր կրելու²⁰:

1921 թ. օգոստոսին Ֆրիտյոֆ Նանսենը նշանակվում է գաղթականների գործով բարձր հանձնակատար²¹: 1921 թ. օգոստոսին և սեպտեմբերին Ժնևում տեղի են ունենում համաժողովներ՝ շահագրգիռ տասը կառավարությունների և բարեգործական կազմակերպությունների մասնակցությամբ, որոնց ընթացքում բարձրացվում են գաղթականների հետ կապված մի շարք սոցիալական և իրավական խնդիրներ: Նանսենը հարցի լուծման նպատակով համագործակցում էր Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ, ում առաջարկում է իրականացնել գաղթականների մարդահամար: Հաջորդ քայլով Նանսենը դիմում է կառավարություններին՝ խնդրելով նշել այն պայմանները, որոնց դեպքում վերջիններս պատրաստ էին ընդունել գաղթականներին, և այն մասնագիտությունները, որոնց տիրապետող գաղթականներին պատրաստ էին ապաստանել: Միաժամանակ Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Ավստրիայում, Հարավսլավիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունաստանում, Էստոնիայում, Լիտվայում և Ֆինլանդիայում նշանակվում են ներկայացուցիչներ, որոնց հետ Նանսենը պետք է համագործակցեր՝ գաղթականների հարցի լուծման նպատակով: Բարձր հանձնակատարի ներկայացուցիչները նշանակվեցին նշյալ երկրներում, ինչպես նաև Թուրքիայում և Հունգարիայում: Եվ վերջապես ստեղծվեց համատեղ հանձնաժողով՝ կազմված հիմնական եվրոպական, ամերիկյան, ռուսական,

Red Cross and the Repatriation of Prisoners of War between Russia and Central Europe, 1920–22”, “Journal of Baltic Studies 38”, N 1, 2007, էջ61–83:

19 Տե՛ս **Louise W. Holborn**, The League of Nations and the Refugee Problem, “The Annals of the American Academy of Political and Social Science, 203”, 1939, էջ 124:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 125:

21 Տե՛ս **Carlile Macartney**, նշվ. աշխ., էջ 22:

հրեական և հայկական բարեգործական կազմակերպություններից, որը Էական դեր խաղաց գաղթականների վերաբնակեցման գործում²²: Միջազգային Կարմիր Խաչի կոմիտեն և Փրկել երեխաներին հիմնադրամը ("Save the Children Fund") իրենց ներկայացուցիչների ծառայություններն առաջարկեցին Նանսենին, ով նաև նախագահում էր Խորհրդատվական մարմինը՝ բաղկացած շահագրգիռ կառավարությունների ներկայացուցիչներից և բարեգործական կազմակերպություններից²³:

Նանսենը շուտով ստիպված էր զբաղվել նաև Կոստանդնուպոլսում տիրող ծանր իրավիճակով, որտեղ նա ստեղծեց հատուկ գրասենյակ՝ համակարգելու համար փրկարարական և գաղթականների վերաբնակեցման աշխատանքները: 1922 թ. սեպտեմբերի Զմյուռնիայի աղետի հետևանքով շուրջ 200.000 հույն և հայ գաղթականներ կենտրոնացել էին Կոստանդնուպոլսում: Ազգերի լիգայի Երրորդ վեհաժողովում Նանսենը զեկուցում է վերջիններիս ծանր վիճակի մասին և խնդրում թույլ տալ օգտագործելու բարձր հանձնակատարի Կոստանդնուպոլսի գրասենյակը գաղթականներին օգնելու համար: 1922 թ. սեպտեմբերի 19-ին Վեհաժողովն ընդունում է բանաձև, որով լիազորում է Ֆրիտյոֆ Նանսենին օգտագործել Ռուսական գաղթականական կազմակերպության ծառայություններն այս նոր ձեռնարկի համար հավաքագրված գումարը տնօրինելու նպատակով, որը հավաքագրվել էր անգլիական, ամերիկյան և այլ խոշոր բարեգործական ընկերություններից, Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանի, Եգիպտոսի, Ռումինիայի և արևմուտքի հայ մեծահարուստների նվիրատվություններից՝ պայմանով, որ Ազգերի լիգան որևէ պատասխանատվություն չի կրելու հայ գաղթականների համար: Միաժամանակ, ռուս գաղթականներին օգնելու աշխատանքները պետք է ընթանային անխափան²⁴: Այսպիսով, այս բավականին անորոշ ձևակերպմամբ Ազգերի լիգան ներգրավվեց հայ գաղթականների խնդրի լուծմանը:

Նշենք, որ իրավական առումով հայ գաղթականները բաժանվում էին հետևյալ 5 խմբերի.

Գաղթականներ, ովքեր լքել էին Օսմանյան կայսրության տարածքը Օսմանյան անձնագրերով՝ պատերազմից առաջ կամ մինչև Մուդրոսի զինադադարը: Նրանց անձնագրերն ուժի մեջ էին մեկ տարի, իսկ հյուպատոսական ծառայությունները չէին ցանկանում երկարաձգել դրանք:

Գաղթականներ, ովքեր լքել էին Օսմանյան կայսրության տարածքը Մուդրոսի զինադադարից հետո Դաշնակից երկրների կողմից տրամադրված անցագրերով կամ այլ փաստաթղթերով, որոնք, սակայն, անձնագրեր չէին:

Գաղթականներ, ովքեր լքել էին Օսմանյան կայսրության տարածքը Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի կողմից տրամադրված անձնագրերով: Հայաստանի Հանրապետությունը դադարել էր գոյություն ունենալ այնտեղ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո և, հետևաբար, անձնագրերը կորցրել էին իրենց վավերականությունը:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 26:

23 Տե՛ս Louise W. Holborn, նշվ. աշխ., էջ 125:

24 Տե՛ս LNA, Registry N 20՝ 16983, 16983 (1928-1932), Classement: Refugees Armenian.

Միտ 100.000 գաղթականներ, ովքեր առանց փաստաթղթերի հապճեպ լքել էին Փոքր Ասիան 1922 թ. աշնանը:

Գաղթականներ, ովքեր ունեին թուրքական կառավարության տրամադրած անձնագրերը՝ նշումով, ով Թուրքիայի տարածքը լքելուց հետո վերադառնալու հնարավորություն չեն ունենալու:

Իրավական առումով կարևոր քայլ էր նաև 1926 թ. մայիսի 12-ին ընդունված լրացուցիչ միջկառավարական համաձայնագիրը, որում հայ գաղթականների համար տրվեց հետևյալ սահմանումը. «Հայկական ծագում ունեցող յուրաքանչյուր անձ, ով նախկինում եղել է Օսմանյան կայսրության հպատակ և ով չունի կամ այնև չի վայելում Թուրքիայի Հանրապետության կառավարության պաշտպանությունը և ով ձեռք չի բերել այլ երկրի քաղաքացիություն»²⁵:

3. Հայ գաղթականներին վերաբնակեցնելու՝ Ազգերի լիգայի նախաձեռնությունները

Հայ ազգային պատվիրակության տվյալներով 1923 թ. Մերձավոր Արևելքում և Եվրոպայում հայ գաղթականների թիվը մոտ 340.000 էր (բացի նրանցից, ովքեր արդեն իսկ տեղափոխվել էին Ռուսաստան): Նրանցից գրեթե կեսը՝ 150.000-ը գտվում էր Սիրիայի գաղթականական ճամբարներում, իսկ մնացածը բաժանված էր հետևյալ համամասնությամբ. 120.000-ը՝ Հունաստանում, 20.000-ը՝ Բուլղարիայում, 2.000-ը՝ Կիպրոսում, 12.000-ը՝ Պաղեստինում, 8.000-ը՝ Միջագետքում, 20.000-ը՝ Կենտրոնական Եվրոպայում²⁶: 1926 թ. 7-րդ Վեհաժողովի ժամանակ ներկայացված զեկույցում բարձր հանձնակատարը և Աշխատանքի միջազգային կազմակերպությունը ներկայացնում են Մերձավոր Արևելքում հայ գաղթականների ծանր վիճակը և Վեհաժողովին խնդրում են միջոցներ ձեռնարկել հայ գաղթականներին Բուլղարիայում, Հունաստանում և Սիրիայում տեղավորելու համար: Ազգերի լիգան հանձնարարում է Աշխատանքի միջազգային կազմակերպությանը և գաղթականների հարցերով Բարձր հանձնակատարին համագործակցել և գտնել արդյունավետ միջոցներ՝ հայ գաղթականների մշտական վերաբնակեցման համար: 1926 թ. սեպտեմբերի 25-ի Վեհաժողովի բանաձևով Աշխատանքի միջազգային կազմակերպությունում ստեղծվում է հատուկ հանձնաժողով Գաղթականական ծառայության ղեկավար Նանսենի նախկին տեղակալ Տ. Ֆ. Ջոնսոնի ղեկավարությամբ²⁷:

Հայ գաղթականների բնակեցման առաջին ծրագիրը, որը նախաձեռնում է Ազգերի լիգան, 50.000 հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում բնակեցնելու այսպես կոչված Երևանյան ծրագիրն էր²⁸: Ազգերի լիգայի Վեհաժողովը առաջարկում է Աշխատանքի միջազգային կազմակերպու-

25 League of Nations, Arrangement of 12 May 1926 relating to the Issue of Identity Certificates to Russian and Armenian Refugees, League of Nations, Treaty Series, Vol. LXXXIX, No. 2004.

26 Մեկ այլ տվյալներով հայ գաղթականների թիվը 320.000 էր, բացի Ռուսաստան գնացածներից, որոնք գտնվում էին Մերձավոր Արևելքում, Բալկաններում և այլ Եվրոպական երկրներում, տես **Walter Adams**, Extent and Nature of the World Refugee Problem, "The Annals of the American Academy of Political and Social Science 203", (May 1939), էջ 28:

27 Տես LNA, he records of the 7th Assembly Plenary Meetings, Geneva 1927.

28 Տես **Fritjof Nansen**, Armenia and the Near East, New York, 1976, էջ 5:

թյանը և Նանսենին ուսումնասիրել ծրագրի իրականացման հնարավորությունը, իսկ այդ նպատակով Հայաստան այցելած փորձագիտական հանձնաժողովը ծրագիրը որակում է տեխնիկապես իրականանալի և առևտրային տեսանկյունից հնարավոր²⁹: Սակայն, երկու հակամարտ հասարակարգերի միջև գաղափարական և քաղաքական հակասությունները թույլ չտվեցին ծրագրի իրականացումը: Ու չնայած բոլոր ջանքերին՝ Ազգերի լիգայի Վեհաժողովը մերժեց Երևանի ծրագիրը:

4. Հայ գաղթականների վերաբնակեցման Մադագասկարյան ծրագիրը

Այսպիսով, քանի որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը չէր կարող իր վրա վերցնել գաղթականների ողջ բեռը, իսկ, ինչպես արդեն նշվեց, թուրքական քաղաքականությունը դեմ էր հայերի վերադարձին³⁰, անհրաժեշտ էր այլ լուծում գտնել հայ գաղթականների վերջնական բնակեցման հարցին: Միաժամանակ, իրենց պատմական հայրենիք վերադառնալու անհնարինության պատճառով հայ գաղթականների խնդրի լուծումը որոշակի առանձնահատկություններ ունեցավ: Ի տարբերություն այլ գաղթականների՝ մասնավորապես հույն, բուլղար և թուրք, որոնք հիմնականում վերադարձան իրենց երկրները, հայ գաղթականների բնակեցումը տարալուծման/դիսպերսիայի բնույթ ստացավ: Արդյունքում, հայ գաղթականները վերաբնակեցվեցին այն երկրներում, որոնց հետ նրանք շատ քիչ կապեր ունեին³¹:

Հաշվի առնելով Խորհրդային Հայաստանում հայ գաղթականների վերաբնակեցման ծրագրի դժվարությունները՝ 1925-1926 թթ. Ֆրանսիայի նախաձեռնությամբ մշակվում է նոր ծրագիր, որով նախատեսվում էր հայ գաղթականների վերաբնակեցումը Ֆրանսիայի անդրծովյան աֆրիկական գաղութներից մեկում: Դեռ 1925 թ. այս ուղղությամբ բանակցություններ էին սկսվել Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ՝ Մարոկոյում կամ Մադագասկարում հայ գաղթականներին աշխատանքի տեղավորելու համար³²: Արդյունքում ներկայացվում է Մադագասկարում³³ հայ գաղթականների վերաբնակեցման ծրագիր:

Թեև այս ծրագրի համար անհրաժեշտ գումարը մոտ կրկնակի ավելի էր Երևանյան ծրագրից, ինչը համարվում էր ծրագրի միակ բացասական կողմը, սակայն այն զերծ էր քաղաքական ենթատեքստից, ինչն էլ, ըստ հեղինակների, պետք է ապահովեր ծրագրի հաջողությունը: Ծրագիրը մշակվել էր Մադագասկարի վերաբնակեցման նախկին տնօրեն Զ. Կառլի կողմից, ով առաջարկում էր Մադագասկարում նախ ստեղծել հայ գաղթականների համար փորձարարական գաղութ, որի իրականացման հաջողությունից հե-

29 Տե՛ս **League of Nations Official Journal**, 7th year, N 9, էջ 1340:

30 Թուրքական կառավարությունն անգամ մերժում էր Թուրքիա մտնելու հայերի անհատական դիմումները: Այսպես օրինակ, Հունաստանից մի հայ՝ Ալեքսան Մուրաֆյան անունով, մուտքի արտոնագիր է խնդրում Թուրքիա մտնելու համար, որտեղ ապրում էր իր մայրը՝ Արմենուի Մուրաֆյանը, սակայն մերժում է ստանում: Տե՛ս LNA, Reistry N 20c 80605, 16983, Classement: Refugees Armenian.

31 Տե՛ս **Walter Adams**, նշվ. աշխ., էջ 28:

32 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926.

33 1896-ից Մադագասկարը Ֆրանսիայի գաղութն էր:

տո նրանց վերաբնակեցնել աֆրիկյան այս կղզում: Նախատեսվում էր ծրագիրը ներկայացնել Մադագասկարի գլխավոր կառավարչին, իսկ նրա իրականացումը տեղում ուսումնասիրելու համար այնտեղ պետք է գործուղվեր ծրագրի ղեկավարը: Հատկանշական է, որ հայերի հրաժարվելու դեպքում նախատեսվում էր ծրագիրն առաջարկել ռուս գաղթականներին:

Ծրագիրը կայանում էր հետևյալում.

Ստեղծել 50 ընտանիքից բաղկացած հայ գաղթականների փորձարարական գաղութ՝ մոտ 150 մարդ:

Մադագասկարի կառավարությունից ստանալ 5.000 հեկտար հողատարածքի համար անհրաժեշտ կոնցեսիա, երկարատև վարկ՝ մոտ 10 ֆրանկ յուրաքանչյուր հեկտարի համար սակագնով:

Գտնել մոտ 2.500.000 ֆրանկ գումար, ինչն անհրաժեշտ էր.

ա) հայ գաղթականներին Մադագասկար տեղափոխելու և առաջին տարում նրանց կարիքները հոգալու համար – 600.000 ֆրանկ,

բ) գաղթականներին Մադագասկարում հաստատելու համար առաջին անհրաժեշտության պարագաներ՝ կենդանիներ, գործիքներ, սերմնացու և այլն ձեռք բերելու համար – 1.750.000 ֆրանկ,

գ) այլ ծախսեր – 150.000 ֆրանկ:

Այս գումարները հնարավորության դեպքում պետք է հավաքվեին հարուստ հայերից, ինչի համար հողը լինելու էր որպես երաշխիք այն հաշվարկով, որ մշակման դեպքում հողի արժեքը կարող էր արագորեն հասնել 1.000 ֆրանկի 1 հեկտարի դիմաց³⁴:

Մադագասկարում հայ գաղթականների վերաբնակեցումը երկակի նպատակ էր հետապնդում: Բացի գաղթականների կենսապահովման և նրանց համար ապրուստի միջոցներ ստեղծելուց՝ ծրագիրը նաև նպաստելու էր գաղութների զարգացմանը Մադագասկարի այն մասերում, որտեղ դրանք զարգացած չէին: Թեև Մադագասկարի գաղութի զարգացումը տեղի էր ունենում առաջանցիկ տեմպերով, գրեթե առանց ֆինանսական ներդրումների՝ հիմնվելով լոկ երկրում առկա ռեսուրսների վրա, սակայն միաժամանակ գաղութացման տեմպերը գոհացուցիչ չէին ֆրանսիական կառավարության համար, քանի որ դեռևս կային ազատ, անմշակ, բերրի հողեր: Այստեղ կարելի էր մշակել մի քանի հազար հեկտար տարածք՝ առանց նեղություն տալու տեղաբնիկներին, որոնք ապրում էին խիստ ցրված: Բացի այդ, ըստ ֆրանսիական կառավարության հաշվարկների՝ ոչ բարդ ոռոգման աշխատանքներ իրականացնելով հնարավոր էր ոռոգել 30 հազար հեկտար տարածք:

Գյուղատնտեսական վերաբնակեցումները³⁵ Մադագասկարում հիմնականում ընթացել էին հեշտությամբ, ինչի նախապայմանը վերաբնակիչներին տրված ազատությունն էր: Գաղութի հիմնումից մինչև հողատարածքի, մշակարույների, աշխատուժի ընտրություն վերաբնակիչներն իրականացրել են սեփական նախաձեռնությամբ, ինչն էլ եղել է հաջողության երաշխիքը և ապահովել գաղութացման գործընթացի անխափան ընթացքը:

Որպես համակարգի հիմնական խնդիր մատնանշվում էր այն հանգա-

34 LNA, Ra 412/1/80/1, 1926, Armenian Refugees, Colonization scheme Madagascar.

35 Վերաբնակեցում և գաղութացում բառերը հողվածում օգտագործվում են փոխարինաբար:

մանքը, որ եվրոպացիները ի վիճակի չէին ձեռքի աշխատանք կատարել Մադագասկարում: Որպես բացասական կողմ էր մատնանշվում նաև այն հանգամանքը, որ սպիտակամորթների վերաբնակեցումը Մադագասկարում խիստ դանդաղ էր ընթանում՝ համեմատած արդեն իսկ երկրում վերաբնակեցված որոշ էթնիկ խմբերի, օրինակ՝ չինացիների, հնդիկների, ինչն արդեն բավական մեծ ծավալի էր հասել: Այդ պատճառով, ֆրանսիացիները խիստ շահագրգռված էին Մադագասկարում հայերի վերաբնակեցմամբ:

Որպես Մադագասկարի վերաբնակեցման մոդել ընտրվել էր Բրազիլիան, որտեղ գործընթացն իրականացվում էր մրցութային կարգով, այսինքն՝ վերաբնակիչներն ընտրվում էին ըստ իրենց ֆիզիկական և մտավոր ունակությունների: Ֆրանսիայի նպատակն էր՝ օգտագործել Մադագասկարի հողի հարստությունները, ինչը, տվյալ դեպքում, կարող էին անել հայերը, «որոնք սիրում էին Ֆրանսիան և ռասայական ընդհանրություններ ունեին ֆրանսիացիների հետ»³⁶: Ֆրանսիան հայերին համարում էր աշխատասեր ժողովուրդ, որոնք կարող էին «աշխատեցնել» հողը և անգամ հավելյալ արդյունք ստանալ դրանից: Փաստորեն, Մադագասկարի վերաբնակեցման համար պակասում էին ձեռքեր և գլուխներ, իսկ հայերի վերաբնակեցումը կարող էր ապահովել երկուսն էլ:

Գործի հաջողությունն ապահովելու համար անհրաժեշտ էին մի քանի պայմաններ.

ա) գտնել հայ ընտանիքներ, ովքեր կհամաձայնեին վերաբնակեցվել Մադագասկարում,

բ) ազատ հողատարածքում ընտրել համապատասխան հողակտոր՝ մոտ 5 հազար հեկտար,

գ) գտնել 2.5 միլիոն ֆրանկի նախնական կապիտալ, որը երաշխավորված կլիներ Մադագասկարի կառավարության տրամադրած հողով,

դ) գնել մեկ կամ մի քանի սարքեր, որոնք հնարավոր կդարձնեն հողակտորի ոռոգումը, ինչի համար անհրաժեշտ կլիներ 200-300 հազար ֆրանկ, ինչը հետագայում պետք է փոխհատուցվեր ջրի հարկով: Իսկ սարքերը դառնալու էին գաղութի սեփականությունը³⁷:

Փաստորեն, նախ անհրաժեշտ էր գտնել հայ ընտանիքներ՝ Մադագասկարում վերաբնակեցվելու համար: Ընդ որում, պարտադիր պայման էր, որ վերաբնակիչները խոր գիտելիքներ ունենային գյուղատնտեսության ոլորտում և կարողանային օգտագործել նաև տեղի բնակիչների աշխատուժը: Միաժամանակ նախատեսվում էր, որ Փարիզում, Մարսելում, Ժնևում գտնվող հայկական կազմակերպություններն իրենք պետք է ընտրեին վերաբնակիչներին, զբաղվեին նրանց տեղավորմամբ, ինչպես նաև երաշխիքներ տրամադրեին, ինչն անհրաժեշտ կլիներ Մադագասկարի կառավարությանը:

Երկրորդ, անհրաժեշտ էր Մադագասկարում գտնել համապատասխան տարածք, որտեղ դեռևս չկային եվրոպական վերաբնակեցումներ, հողերը բերրի էին և հնարավոր էր արագ զարգացում: Այս կետի հետ կապված նախատեսվում էր քննարկումներ կազմակերպել գաղութների կառավարման մարմինների հետ՝ կղզու արևելյան կամ արևմտյան ափի ընտրության

36 LNA, R 412/1/90/1, 1926.

37 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926, Ra 412/1/80/1, 1926.

հարցում: Ըստ նախագծի՝ ավելի նախընտրելի էր կղզու արևմտյան ափը, որտեղ հողն ավելի բերրի էր: Ծրագրին վստահություն էր հաղորդում այն հանգամանքը, որ Մադագասկարի արևմտյան ափին վերաբնակեցման ծրագիրը հաջող էր, կարիք չկար անհանգստանալու գետերի վարարման կամ հողերի աղակալման առումով: Բացի այդ, այստեղ հայերը կարող էին վերաբնակեցվել և ապրել մեծ խմբերով, ինչը վերջիններիս համար խիստ ցանկալի էր: Արդյունքում, Մադագասկարում հայերի վերաբնակեցման համար ընտրությունը կանգ էր առել Մադագասկարի խոշոր գետերից մեկի՝ Մանգոկիի գետաբերանի հովտում (նկար 1):



Նկար 1. Մանգոկիի հովտի ձեռակերտ քարտեզը Աղբյուրը՝ Ազգերի լիգայի արխիվ, Ra 412/1/80/1, 1926.

Վերաբնակեցման տարածքի մակերեսը կազմում էր մոտ հարյուր հիսուն հազար հեկտար, որտեղ հողերն օգտագործված չէին: Այս տարածքում հնարավոր էր բույսերի մշակությունը նույններից մինչև մարտ կազմակերպել առանց ոռոգման, իսկ ոռոգման համակարգի ստեղծման դեպքում ամբողջ տարվա ընթացքում կարելի էր զբաղվել բույսերի մշակությամբ, ընդ որում՝ բավականին տարբեր բույսերի՝ եգիպտացորեն, բամբակ, բանան, շաքարեղեգ, բրինձ և այլն³⁸:

Հայերի վերաբնակեցման ծրագիրը նախատեսվում էր իրականացնել մի ընկերության հիմնադրման միջոցով, որի իրավական ձևը դեռ պետք է

38 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926, Ra 412/1/80/1, 1926.

որոշվեր: Ընկերության անդամներ էին լինելու այն անձինք, որոնք պետք է ներդնեին սոցիալական կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ (խոսքը 2.5 միլիոն ֆրանկի մասին է): Նախատեսվում էր, որ դրանք լինելու էին եվրոպայի հարուստ հայերը, նաև այն կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք զբաղվում էին հայ գաղթականների վերաբնակեցման կամ օգնության հարցերով: Մադագասկարի կառավարությունն այդ ընկերությանն էր տրամադրելու որոշակի հողատարածք՝ կամ անվճար, կամ պայմանական շատ ցածր գնով: Որոշակի գումար պետք է տրամադրեր նաև Մադագասկարի կառավարությունը՝ ջուրը վեր մղող սարքեր ձեռք բերելու և դրանք տեղակայելու համար: Իսկ գումարները հետագայում պետք է մարվեին ջրօգտագործման հարկի միջոցով՝ գործունեության երկրորդ տարվանից սկսած: Հետագայում հայ վերաբնակիչները հնարավորություն կունենային գնելու իրենց հողերը, իսկ այդ գումարները կտրամադրվեին գործը նախաձեռնողների ներդրած գումարները հատուցելու համար: Ներդրված գումարները երաշխավորված կլինեին այն հողերով, որը Մադագասկարի կառավարությունը տրամադրելու էր այդ ընկերությանը: Նախատեսվում էր, որ նախնական փուլում անհրաժեշտ է լինելու 50 հազար հեկտար հող, որից յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվելու էր 50 հեկտար, իսկ մնացածը պահվելու էր որպես պահուստային ֆոնդ՝ նոր ժամանող վերաբնակիչներին տրամադրելու համար: Սա ապահովելու էր ձեռնարկի հաջողությունը: Մադագասկարի վերաբնակեցման նախկին տնօրեն պրն Կառլը վստահ էր, որ հետագայում Մադագասկարի այդ հողերի գինը հասնելու է հազար ֆունտի՝ այդ ժամանակի 20 ֆունտի փոխարեն³⁹:

Ըստ ծրագրի՝ յուրաքանչյուր մարդու համար անհրաժեշտ նախնական կապիտալը հաշվարկված էր 75 հազար ֆրանկ (մանրամասն տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հայ գաղթականների Մադագասկարում վերաբնակեցման ծրագրի մոտավոր ֆինանսական հաշվարկ

	Ծախսերի նկարագրություն	Անհրաժեշտ գումար (ֆրանկ)
1.	Կեցություն և նավարկություն Մարսելից	300
2.	Ճանապարհորդություն երկրորդ կարգի վագոնում Մարսելից դեպի Տամատավ	3.674
3.	Տամատավից դեպի Տանանարիվ	500
4.	Սպասելու հետ կապված ծախսեր	3000
5.	Շինարարություն, տուն, ախոռ	16.000
6.	Շահագործման համար անհրաժեշտ նյութեր	4.500
7.	Ընտանի կենդանիներ	4.000
8.	20 հա խոպան հողի մշակում	4.000
9.	20 հա վար.	4.000
10.	Հողակտորի նախապատրաստում (ցանք, տունկ)	1.200
11.	20 հա նոր հողատարածքի մշակման ձեռնարկ	6.200
12.	20 ամիս ապրելու համար անհրաժեշտ գումար	16.000

39 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926, Ra 412/1/80/1, 1926.

13.	Պահուստային ֆոնդ և չնախատեսված ծախսեր	10.000
	Ընդհանուր	73.974

Ծրագիրը նախատեսում էր նաև դիմել Մադագասկարի կառավարությանը՝ 1926 թ. բյուջեում հայ վերաբնակիչների համար նախատեսել 100–500 հազար ֆրանկ՝ ապառիկ դրամարկղ հիմնելու համար, որը հեշտացնելու էր հայ վերաբնակիչների բնակեցումը և օգնելու էր վերջիններիս գործիքներ և սերմացու ձեռք բերելու հարցում⁴⁰:

Հատկանշական է, որ Ֆրանսիայի գաղութների կառավարիչն իր համաձայնությունն էր տվել ծրագրին և խորհուրդ տվել անմիջապես դիմել Մադագասկարի կառավարությանը: Հաշվի առնելով Բեյրութում հայերի բավական լուրջ հաջողությունները հասարակական աշխատանքների և շինարարության ոլորտներում՝ նախատեսվում էր Մադագասկարում հայերի վերաբնակեցման գործընթացը ձեռնարկել տարբեր ընկերությունների և ձեռնարկությունների ղեկավարների հետ, որոնց առաջարկվում էր նշանակել հենց հայերից:

Ծրագրի անխափանությունն ու երկարատևությունը ապահովելու համար առաջարկվում էր գովազդի միջոցով տարածել, թե ինչ առավելություններից պետք է օգտվեն հայերը, որոնք կհամաձայնեին վերաբնակեցվել Մադագասկարում, ինչպես նաև տեղեկացնել ֆրանսիական ընկերությունների և Մադագասկարի ձեռնարկությունների ղեկավարներին, թե Ֆրանսիայի էկոնոմիկայի գործակալությունը ինչ կարող է հատկացնել վերաբնակիչներին՝ անհատական կամ կոլեկտիվ խնդրանքներ ստանալու դեպքում⁴¹:

Զնայած Մադագասկարյան ծրագրի իրականացման մեջ Ֆրանսիայի շահագրգռվածությանը և ներդրած ջանքերին՝ այն իրականություն չդարձավ, քանի որ արձագանք չգտավ հայ գաղթականների շրջանում: Փոխարենը Ֆրանսիան առաջ քաշեց իր մանդատային տարածքներից մեկում՝ Սիրիայում հայ գաղթականներին վերաբնակեցնելու ծրագիրը, ինչի արդյունքում Ազգերի լիգայի հետ համագործակցությամբ մեծ թվով հայ գաղթականներ ապաստանեցին Սիրիայում⁴²:

5. Հրեական հարցի լուծման «Մադագասկարյան նախագիծը»

Հատկանշական է, որ Մադագասկարում վերաբնակեցման մեկ այլ նախագիծ շրջանառության մեջ դրվեց 1940-ական թթ. Գերմանիայի նացիստական կառավարության կողմից, որով նախատեսվում էր շուրջ 4 միլիոն հրեաների տեղափոխել Մադագասկար:

Նշենք, որ ի տարբերություն հայերի՝ հրեաների պարագայում գաղափարը նոր չէր. դեռ 1885 թ. հրեաներին Մադագասկարում վերաբնակեցնելու գաղափարն առաջարկել էր գերմանացի գիտնական, հակասեմիթական Պոլ դե Լագարդը, ում աշխատանքները հետագայում մեծ ազդեցություն

40 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926, Ra 412/1/80/1, 1926.

41 Տե՛ս LNA, R 412/1/90/1, 1926, Ra 412/1/80/1, 1926.

42 Մանրամասն տե՛ս **Edita Gzoyan**, The League of Nations and Armenian Refugees. The Formation of the Armenian Diaspora in Syria. "Central and Eastern European Review", V. 8, 2014.

ունեցան Հիտլերի վրա⁴³: Գաղափարը 1930-ական թթ. քննարկվել էր նաև անգլիական, ֆրանսիական, լեհական կառավարությունների կողմից: 1937 թ. լեհական կառավարությունն անգամ փաստահավաք խումբ էր ուղարկել Մադագասկար՝ այնտեղ հրեական «հայրենիք» ստեղծելու գաղափարի հնարավորությունը ստուգելու համար: Եզրակացությունն այն էր, որ կղզու բարձր ջերմային գոտին և վատ ենթակառուցվածքները թույլ կտան տեղավորել միայն մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար ընտանիք⁴⁴:

1938-1940 թթ. Մադագասկարում հրեաների վերաբնակեցման գաղափարը մի քանի անգամ բարձրացվում է նաև գերմանական նացիստների շրջանակում⁴⁵: Այսպես՝ 1940 թ. մայիսի 25-ին Հայնրիխ Հիմլերն Ադոլֆ Հիտլերին է ներկայացնում մի ծրագիր, որով առաջարկվում էր վերջնականապես ազատվել հրեաներից՝ դեպի Աֆրիկա կամ գաղութներից որևէ մեկը նրանց տեղահանման միջոցով⁴⁶:

Ֆրանսիայի մոտալուտ պարտությունը և այն հանգամանքը, որ վերջինիս գաղութներն անցնելու էին Գերմանիային, նոր վերածնունդ են տալիս գաղափարին, և 1940 թ. ամռանն այս ուտոպիստական նպատակը գերմանական կառավարության կողմից վերածվում է կոնկրետ նախագծի: Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Հրեական բաժնի ղեկավար Ֆրանց Ռադենմայսերի՝ 1940 թ. հունիսի 3-ին ներկայացրած «Մադագասկարյան նախագծի» գաղափարը դեղահարի ազդեցություն է ունենում Գերմանիայում և կայծակնային արագությամբ տարածվում նաև նացիստական ղեկավարության շրջանում: Գաղափարի տարածումից հետո անգամ որոշ ժամանակով դադարեցվում են Լեհաստանում հրեական գետտոների կառուցման աշխատանքները⁴⁷:

Ռադենմայսերը գտնում էր, որ Գերմանիայի մոտալուտ հաղթանակը վերջինիս հնարավորություն է տալիս, նաև՝ պարտավորություն, վերջնականապես լուծելու հրեական հարցը՝ նրանց Եվրոպայից տեղափոխելու միջոցով: Մադագասկարի նախագիծը նախատեսում էր, որ հաշտության պայմանագրով Ֆրանսիան Գերմանիային էր զիջելու Մադագասկար կղզին որպես մանդատային տարածք: Տարածքի այն մասը, որը ռազմավարական կարևորություն ուներ, դրվելու էր գերմանական էսէս-ի ոստիկանական կառավարչի հսկողության տակ⁴⁸:

Մադագասկարում նրանք չէին ենթարկվելու գաղութային վարչակարգին, լինելու էր «ինքնակառավարվող» հրեական գաղութ, որը վերահսկվելու էր գերմանական էսէս ոստիկանական ուժերի կողմից: Այս առումով կղզում լինելու էր «իրավասությունների մեծ վերադրում», քանի որ հրեաներն ունենալու էին իրենց քաղաքապետը, ոստիկանությունը, փոստային բաժանմունքը: Ռադենմայսերի կարծիքով հրեաների հանդեպ այս «մեծա-

43 Տե՛ս **Peter Longerich**, Holocaust, The Nazi Persecution and Murder of the Jews, New York, "Oxford University Press", 2010, էջ 162.

44 Տե՛ս **Christopher R. Browning**, The Origins of the Final Solution: The Evolution of Nazi Jewish Policy, September 1939-March 1942, Lincoln, "University of Nebraska Press", 2004, էջ 81.

45 Տե՛ս նույն տեղում, էջ 83:

46 Տե՛ս **Peter Longerich**, նշվ. աշխ., էջ 161-164:

47 Տե՛ս **Christopher R. Browning**, նշվ. աշխ., էջ 84:

48 Տե՛ս **Peter Longerich**, նշվ. աշխ., էջ 162:

հոգույթունը» բարձրացնելու էր Գերմանիայի վարկանիշը⁴⁹: Միաժամանակ, սա նպատակ էր հետապնդում Մադագասկարում հրեաներին պահել որպես «պատանդ»՝ Ամերիկայում իրենց հայրենակիցների «լավ վարքի» դիմաց⁵⁰: Այսինքն՝ Մադագասկարը վերածվելու էր «հրեական պահոցի»:

Հուլիսի 2-ով թվագրված և «Հրեական հարցի վերջնական լուծում» վերնագրված Ռադենախների մեկ այլ նամակում Գերմանական տեսանկյունից Մադագասկարյան նախագիծը որակվում էր որպես հրեական մեծ գետտո (superghetto), որը պետք է վերահսկվեր անվտանգության ոստիկանական ուժերի կողմից, ովքեր փորձառություն ունեին և կարող էին անհրաժեշտության դեպքում ճնշել անջատական փորձերը. նաև պետք է ճնշումներ գործադրեին Մադագասկարի հրեաների վրա՝ նրանց ամերիկյան հայրենակիցների կողմից Գերմանիայի դեմ թշնամական գործողությունների դեպքում:

Նախագծի հեղինակը համոզված էր, որ կղզին բավականաչափ տարածք ուներ 6.5 միլիոն հրեաներին տեղավորելու համար⁵¹: Մարդկանց թվաքանակի առումով ծրագիրն, իհարկե, անհամեմատելի էր հայկականի հետ, քանի որ հայ գաղթականների դեպքում Մադագասկար կարող էր ուղարկվել 100–150 հազարից ոչ ավելի մարդ:

Ըստ հրեական նախագծի՝ Եվրոպայից 4.9 միլիոն և այլ վայրերից 1.6 միլիոն հրեաներին Մադագասկարում բնակեցնելու պարագայում տեղի բնիկների հետ միասին բնակչության միջին խտությունը լինելու էր 16 մարդ յուրաքանչյուր 1ք/կմ համար, ինչը կազմում էր աշխարհի մակարդակով միջինից բարձր ցուցանիշ, իսկ Գերմանիայի համեմատ կազմում էր 1/10-րդ մասը⁵²: Նախագծի հեղինակը նաև վստահ էր, որ կղզին իր բնական պաշարների և ռեսուրսների շնորհիվ կարող էր ապահովել ողջ հրեա բնակչությանը, ինչն ակնհայտորեն չէր համապատասխանում իրականությանը⁵³: Նախատեսվում էր հրեաներին բնակեցնել կղզու բարձրադիր շրջաններում, որտեղ կլիման ավելի բարեխառն էր և գոլ, իսկ ցածրադիր գոտիները շոգի և խոնավության պատճառով «վնասակար էին եվրոպացիների համար»⁵⁴:

Նախագծի հեղինակը խիստ շահագրգռված էր նաև նախագծի տնտեսական կողմով, քանի որ նախատեսվում էր ստեղծել ներեվրոպական բանկ՝ հրեական կապիտալի օգտագործման նպատակով: Նախագծի իրականացման նպատակով հավաքագրված հրեական կապիտալը պետք է օգտագործվեր վերաբնակեցման ծախսերը հոգալու համար: Բանկը նաև կառավարելու էր Մադագասկարում հրեաների գույքը, որը աստիճանաբար հանձնվելու էր վերջիններիս: Բանկը այնուհետև շարունակելու էր գործել որպես միջնորդ՝ Մադագասկարի հրեական «պահոցի» և արտաքին աշխարհի միջև, քանի որ անմիջական տնտեսական բոլոր շփումները արգել-

49 Տե՛ս **Christopher R. Browning**, նշվ. աշխ., էջ 85–8, տե՛ս նաև՝ **Charroll Kaker**, *The Holocaust as Colonial Genocide: Hitler's "Indian Wars" in the "Wild East"*, Springer, 2013, էջ 68:

50 Տե՛ս **Peter Longerich**, նշվ. աշխ., էջ 163:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 163–164:

52 Մադագասկարի տարածքը կազմում է 587000ք/կմ:

53 Տե՛ս **Christopher R. Browning**, նշվ. աշխ., էջ 86, տե՛ս նաև լեհական փաստահավաք խմբի եզրակացությունը:

54 Տե՛ս նույն տեղում:

վելու էին⁵⁵: Հրեաները պետք է հրաժարվեին իրենց եվրոպական քաղաքացիությունից, իսկ նրանցից բռնագրաված գույքը պետք է ապահովեր հսկա գետտոյի պահպանումը⁵⁶: Հրեաները ֆինանսապես պատասխանատու էին լինելու Մադագասկարում իրենց հանձնված անշարժ գույքի համար, և եվրոպայում նրանց ողջ ունեցվածքը պետք է փոխանցվեր այդ նպատակով ստեղծված բանկին: Այստեղ հայկական ծրագրի հետ նմանությունը թերևս այն էր, որ այս դեպքում ևս նախատեսվում էր օգտագործել մեծահարուստների գումարները, նաև ստեղծել հատուկ ընկերություն/բանկ՝ այդ գումարները տնօրինելու նպատակով:

1940 թ. օգոստոսին Մադագասկարում հրեաների վերաբնակեցման նոր նախագիծ է կազմվում արդեն Ռայխի անվտանգության գլխավոր գրասենյակի կողմից (RSHA) Ադոլֆ Այքմանի հեղինակությամբ⁵⁷, որը ներկայացվում է հրեաներին: Վերջիններս թեև մերժում են Մադագասկարի նախագիծը՝ նախընտրելով վերաբնակեցումը Պաղեստինում, սակայն նացիստական վերնախավը կտրականապես դեմ էր Պաղեստինում հրեաների վերաբնակեցմանը: Նախագիծը նախատեսում էր 4 տարվա ընթացքում աֆրիկյան Մադագասկար կղզի տեղափոխել մոտ 4 միլիոն հրեաների: Երկու ծրագրերով նախատեսված վերաբնակեցման թվերը ևս խիստ տարբեր էին. եթե հայերի դեպքում խոսքը գնում էր մոտ 50.000 գաղթականի մասին, ապա հրեաների դեպքում այդ թիվն անհամեմատ մեծ էր:

Այստեղ արդեն չէր խոսվում գերմանական «գթասրտության» մասին. Մադագասկարը դառնալու էր «նոստիկանական երկիր», որտեղ թեև գործելու էին հրեական կազմակերպություններ, սակայն նրանց հիմնական նպատակը լինելու էր գերմանական ուստիկանության հրամանների արագ և արդյունավետ կատարումը: Ծրագիրը պետք է ֆինանսավորվեր հատուկ բանկի կողմից, որը տնօրինելու էր հրեաներից բռնագրաված գույքը:

Սակայն Երկրորդ աշխարհամարտի ռազմական գործողություններն ընթացան ոչ նախատեսված հունով, և 1942 թ. փետրվարին ծրագիրը վերջնականորեն արխիվացվեց. հրեաներին ինչ-որ տեղ տեղափոխելու գաղափարը փոխարինվեց նրանց ֆիզիկապես ոչնչացնելու գաղափարով:

Այսպիսով, Մադագասկարյան պլան կամ ծրագիր անունը կրող և երկու բախտակից ժողովուրդներին ևս մի հարցով կապող այս ծրագրերը չիրականացան: Ինչպես հայերը, այնպես էլ հրեաները մերժեցին Մադագասկարում վերաբնակեցվելու գաղափարը՝ առաջինները նախընտրելով սիրիական, իսկ երկրորդները՝ պաղեստինյան տարածքը⁵⁸: Չնայած մի շարք նմանություններին, այս ծրագրերն ընդգծված կերպով տարբեր էին նախ և առաջ նպատակի առումով: Ի տարբերություն ֆրանսիացիների, որոնք ցանկանում էին զարգացնել Մադագասկարի իրենց գաղութը հայերի վերաբնակեցման և նրանց ունակությունները օգտագործելու միջոցով, գերմանացիների համար Մադագասկարը հրեական հարցը փակելու միջոց էր: Եթե

55 Տե՛ս նույն տեղում:

56 Տե՛ս Peter Longerich, Holocaust, The Nazi Persecution and Murder of the Jews, New York, "Oxford University Press", 2010, էջ 161-164:

57 Հոլոքոսթի ժամանակ Ադոլֆ Այքմանը գլխավոր դերակատարություն ունեցավ՝ կազմակերպելով դեպի գետտոներ և համակենտրոնացման ճամբարներ հրեաների տեղահանումը: Տե՛ս նույն տեղում, էջ 87:

58 Իհարկե, ծրագրերը չիրականացան նաև այլ գործոնների ազդեցությամբ:

Մադագասկարում հայերի վերաբնակեցումը նպատակ ուներ փրկել ցեղապանությունից հետո ողջ մնացած հայերին, ապա 1940-ական թթ. Մադագասկարում միլիոնավոր հրեաների վերաբնակեցումը նրանց չեզոքացնելու մտադրություն ուներ:

Էդիտա Գ. Գզոյան – հեղինակ է մեկ մենագրության (երկրորդը նախապատրաստական փուլում է) և շուրջ 4 տասնյակ հոդվածների: "Central and Eastern European Review" միջազգային ամսագրի հայաստանյան խմբագիրն է, ինչպես նաև «Ցեղասպանագիտական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալը: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց ցեղասպանության հետ կապված իրավական և պատմական հիմնախնդիրները, Ազգերի լիգայի և հայկական հարցի առնչությունները, գիտաչափությունը:

editagzoyan@gmail.com

Summary

THE PLAN TO ESTABLISH AN ARMENIAN SETTLEMENT IN MADAGASKAR IN 1925–1926

1940s Madagaskar Plan to Solve the Jewish Issue:
A comparative Analysis

Edita G. Gzoyan

Key words – League of Nations, settlement of Armenian Refugees, Yerevan Project, Armenian Genocide, Madagaskar, French colony, Final Solution, Madagaskar Plan, resettlement of the Jews.

The League of Nations played an important role in the resettlement of the Armenian refugees and formation of Armenian Diaspora after the Genocide. One of the initiatives of the League was connected with the saving of the Armenian refugees and their resettlement to other parts of the world. The rather interesting project of the Armenian refugees in Madagaskar was elaborated (1925–1926) as an alternative to the so-called Yerevan Project – the resettlement of Armenian refugees in Soviet Armenia. The project of resettlement of the Armenians in Madagaskar was not implemented due to lack of interest among the Armenian refugees and other concerned circles.

Meanwhile, if in 1925–1926 the League of Nations considered the resettlement of Armenians in Madagaskar as salvage to their refugeehood, then in 1940s the Third Reich viewed the transfer of Jews to Madagaskar as an alternative to Final Solution of the European question.

ПРОГРАММА 1925–1926 ГГ. ПО СОЗДАНИЮ АРМЯНСКОГО ПОСЕЛЕНИЯ НА МАДАГАСКАРЕ

И «Мадагаскарский план» 1940–х гг. по решению еврейского вопроса: сравнительный анализ

Гзоян Эдита Г.

Ключевые слова – Лига наций, поселения армянских беженцев, Ереванский план, Геноцид армян, Мадагаскар, французская колония, окончательное решение, Мадагаскарский план, переселение евреев.

Лига наций сыграла важную роль в деле переселения армянских беженцев и образования армянской диаспоры после геноцида. Одна из инициатив Лиги наций была связана со спасением армянских беженцев и переселением их в разные уголки мира. В рамках этой инициативы был разработан достаточно интересный проект поселения армянских беженцев на Мадагаскаре (1925–1926), который считался альтернативой так называемому Ереванскому плану – поселению армянских беженцев в Советской Армении. Проект поселения армян на Мадагаскаре не был осуществлен из-за отсутствия интереса среди армянских беженцев и других заинтересованных лиц.

Интересно, что если в 1925–1926 годах Лига наций рассматривала переселение армян на Мадагаскар как спасение от беженского бедствия, то спустя некоторое время, в 1940–х годах, Мадагаскар будет рассматриваться Третьим рейхом как вариант «окончательного решения» Еврейского вопроса.

REFERENCES

1. **Barsegov Ju. G.**, Genocid armjan i objazatel'stva mirovogo soobshestva. Dokumenty i komentarii, M. "Gardariki", 2002 (**In Russian**).
2. **Barsegov Ju. G.**, Genocid armjan: Prestuplenie po mezhdunarodnomu pravu, XXI vek, M, "Soglasie", 1976 (**In Russian**).
3. **Hovhannisyan A.**, Qemal At'at'urqə yev' hayeri unezrkman gorc'ənt'acə, "VEM", 2011 (**In Armenian**).
4. **T'orikyan Sh'.**, Haykakan harcə yev' mijazgayin orenqə, Peyrut', 1976 (**In Armenian**).
5. **Vardanyan G.**, Huyn bnakch'ut'yunə Osmanyany kaysrut'yunum yev' p'oqrasiakan agh'etə (1914-1923), Ye'r., "Kolazh", 2012 (**In Armenian**).

ՀԻՇՆՈՒՄՆԵՐ

ԺԱ (ԺԷ) ԳՄՄԻ, ԲԻՐ 2 (66), ԿՄԻՐԻ-ԿՄԻՐԻ, 2019

ՀՀՎ ԿԱՆԿԱԿԱՅԻՆԻԿԱՆ ԿԱՆՈՐԵՍ